



Քաղաքացիական գործ  
թիվ 473/0014/05/14

ՎԵՒՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ



01.08.2014թվական

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության  
դատարանը

Նախագահությամբ՝  
դատավոր՝  
քարտուղարությամբ՝  
մասնակցությամբ  
հայցվորի  
լիազոր ներկայացուցիչ՝

Հ.Ենոքյանի  
Լ.Ավետիսյանի

Գ.Դավթյանի  
/փաստաբանական գործունեության  
արտոնագիր թիվ 520/

պատասխանողի  
լիազոր ներկայացուցիչներ՝

Ա.Մկրտչյանի  
Վ.Գրիգորյանի  
Ս.Բաբայանի  
Ս.Քարամյանի

դռնբաց դատական նիստում, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Անժելա Մեջլումյանի ընդդեմ ՀՀ Արարատի մարզպետի, «ՀՀ Արարատի մարզի Հնաբերդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի՝ 05.11.2013 թվականի թիվ 167, 17.12.2013 թվականի թիվ 210, 18.12.2013 թվականի թիվ 211 կարգադրություններն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը գանձելու պահանջների մասին

Պ Ա Ր Զ Ե Ց`

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

30.01.2014 թվականին հայցվորը դիմել է ՀՀ վարչական դատարանի Վեդու նստավայր:

31.01.2014 թվականին ՀՀ վարչական դատարանը հայցադիմումը վերահասցեագրել է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանին:

25.02.2014 թվականին քաղաքացիական գործը հանձնվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հ.Ենոքյանի:

27.02.2014 թվականին քաղաքացիական գործն ընդունվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր՝ Յ.Ենոքյանի վարույթ:

## 2. Հայցվորի դիրքորոշումը.

Դիմելով դատարան հայցվորը հայտնել է, ունի 23 տարվա մանկավարժական ստաժ, որից 19-ը տարին աշխատել է ՀՀ Արարատի մարզի Հնաբերդի միջնակարգ դպրոցում: 1994-1998 թվականներին այնուհետև՝ 1999-2006 թվականներին աշխատել է նշված դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցչուհի, իսկ 2006 թ.-ից՝ որպես դպրոցի տնօրեն: «ՀՀ Արարատի մարզպետի 05.11.2013թ. թիվ 167 և 17.12.2013թ. թիվ 210 կարգադրություններով ՀՀ Արարատ մարզի Հնաբերդ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Անժելա Մեջլումյանին հայտարարվել է խիստ նկատողություններ, որոնք իրեն հանձնվել են 24.12.2013թ.-ին, իսկ դրանց հիման վրա 18.12.2013թ.-ի թիվ 211 կարգադրությամբ վերջինս ազատվել է աշխատանքից: Կարգադրությունները ստանալուց հետո պարզ է դարձել, որ կարգադրության խիստ նկատողություններից առաջինի հիմքում դրվել է միայն իրավանորմ, երկրորդի հիմքում՝ ինչ-որ աուդիտորական հաշվետվություն, իսկ աշխատանքից ազատման կարգադրության հիմքում դրվել է նշված խիստ նկատողություններ հայտնելու մասին կարգադրությունները և աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետը, 121-րդ հոդվածի 1-ին կետը:

Վիճարկվող կարգադրություններով հայցվորը ենթարկվել է խիստ նկատողությունների և հեռացվել դպրոցի տնօրենի պաշտոնից: Կարգադրությունները չունեն «Ն» կամ «Ա» տառերով նշում, ուստի «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն անհատական իրավական ակտեր են:

Վիճարկվող 05.11.2013 թվականի թիվ 167 կարգադրությունն ընդունվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետին, «Պետական առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետին և ՀՀ նախագահի 06.05.1997 թվականի թիվ ՆՀ 728-Ն հրամանագրի 1.6-րդ կետին հղում կատարելով, այսինքն՝ իրեն խիստ նկատողություն հայտնելու մասին առաջին կարգադրությունն ընդունվել է ի կատարումն վերը նշված դրույթների: Առաջին կարգադրության հիմքում դրվել է դպրոցի կանոնադրության 68-րդ կետի 17-րդ ենթակետի պահանջի խախտումը: Փաստորեն առաջին կարգադրության հիմքում առկա չէ որևէ փաստական հիմք, որովհետև կարգադրության պայմաններում տնօրենը ենթարկվել է տույժի, այն է՝ խիստ նկատողության, ինչը դժվարացնում է իրականացնել իրավական պաշտպանությունը: Կարգադրության հիմքում դրվել է հայցվորի իրավունքը, քանզի պետք է ենթադրել, թե աշխատանքից ազատվել և այդ ենթադրության վրա կառուցվել է նկատողությունը:

Վիճարկվող 17.12.2013 թվականի թիվ 210 կարգադրությունը ընդունվել է օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետին, «Պետական առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածին հղում կատարելով, այսինքն խիստ նկատողություն հայտնել, որի մասին երկրորդ կարգադրությունը ընդունվել է համաձայն և ի կատարումն վերը նշված ակտերի դրույթների: Երկրորդ կարգադրության հիմքում դրվել է դպրոցում կատարված պլանային ուսումնասիրության վերաբերյալ մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի



աուդիտորական հաշվետվությունը: Վերջինիս մասին երկրորդ կարգադրության մասում տվյալները առկա չեն, այսինքն թե ինչ ամսաթվի հաշվետվության մասին է խոսքը: Հայցվորը 24.12.2013 թվականին տեղեկանալով նաև երկրորդ կարգադրության և դրա հիմքում ընկած աուդիտորական հաշվետվության մասին, պահանջել է այդ հաշվետվությունը: Մարզպետի աշխատակցի կողմից 24.12.2013 թվականին իրեն է հանձնվել 05.12.2013 թվականի աուդիտորական հաշվետվությունը, որը ստանալով՝ ինքը ստորագրել է, սակայն համաձայն չի եղել նման հաշվետվության հետ: Հայցվորը ենթադրում է, որ երկրորդ կարգադրության հիմքում դրվել է հենց 05.12.2013 թվականի աուդիտորական հաշվետվությունը, որը կազմվել է օրենքի բազմաթիվ խախտումներով: Դրանք հետևյալն են.

«Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 6-րդ պարբերությունների համաձայն աուդիտ իրականացնող անձը պետք է լինի աուդիտորական կազմակերպություն, վերջինս աուդիտորական ծառայություններ իրականացնող իրավաբանական անձ է, իսկ աուդիտորը աուդիտորի որակավորում ստացած ֆիզիկական անձն է: Սույն գործով հայցվորին հանձնված աուդիտորական ուսումնասիրությունը իրականացվել է ՀՀ Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ՝ Ս.Սարգսյանի, Հ.Պողոսյանի և ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ Ս.Մանուկյանի միջոցով: Հաշվետվությունից հստակ երևում է, որ այն ստորագրված է հիշատակված անձանցով համալրված հանձնաժողովի կողմից: Նախ, անհասկանալի է, թե արդյոք այդ անձիք ունեին նման իրավասություն, երկրորդ, արդյոք հանձնաժողովը աուդիտորական կազմակերպություն է առանձին իրավաբանական անձի կարգավիճակով, երրորդ, եթե իսկապես նման անձիք իրավասու էին նման հաշվետվություն կազմել, ապա ինչ նորմատիվ իրավական ակտերով են ղեկավարվել, ինչ կազմակերպատիրավական կարգավիճակով են հանդես գալիս: Բացի դա, երկրորդ կարգադրության մեջ նշված հաշվետվությունը արդյոք դա նույն 05.12.2013 թվականի հաշվետվությունն է, քանզի կարգադրության մեջ՝ որպես հիմք նշված չէ կարգադրության ամսաթիվը, առավել ևս, երբ երբ այնտեղ նշվածից բխում է, որ հաշվետվությունը կազմել է մարզպետարանի ներքին աուդիտի բաժինը, այնինչ հաշվետվության մեջ նշված է հանձնաժողով, համալրվել է նաև այլ բաժնի աշխատակցով: Ընդ որում, բաժինը ըստ հիշատակված օրենքի դրույթի չի կարող լինել աուդիտորական կազմակերպություն կամ աուդիտոր, ինչի հիմքով ցանկացած նման հաշվետվություն օրինական չէ, բացի այդ վերոնշյալ աուդիտորական հաշվետվությունը հայցվորին է հանձնվել 24.12.2013 թվականին, որից 19 օր հետո, այն ժամանակ, երբ իրեն հեռացնում են աշխատանքից, որից հետո, երբ հայցվորը մինչև 24.12.2013 թվականը հանդիսացել է դպրոցի տնօրենի ղեկավարը:

Որպես 05.12.2013 թվականի աուդիտորական հաշվետվության մասին նման հիմք նշված է առանց թվագրման և ամսաթվի Արարատի մարզպետի կարգադրությունը, ներքին աուդիտի 2013 թվականի տարեկան օրակարգի կազմակերպության ընդգրկման ժամանակահատված՝ 2012 և 2013 թվականի ինը ամիսները, այսինքն հաշվետվությունը որոշակի չէ, չկա հստակ ժամանակահատված, քանզի չի երևում թե մարզպետի, որ կարգադրության մասին է խոսքը և 2012 ու 2013 թվականների, որ իննը ամիսներին է վերաբերում ուսումնասիրությունը: Ընդ որում







քննարկումներին, ավելին տվել է գրավոր բացատրություն՝ հասցեագրված մարզպետին, որն ստորագրել է անձամբ և վավերացվել դպրոցի կնիքով: Մարզպետի 05.11.2013 թվականի թիվ-167 կարգադրությամբ տրված առաջին կարգապահական տույժի փաստական հիմքը նույնացվում է դպրոցի կանոնադրության 68-րդ կետի 17-րդ կետում նշված հիմքերին՝ մասնավորապես, ուսումնանյութական բազայի հաշվառումը և պահպանումը չապահովվելուն: Կարգապահական տույժը հիմնավորող փաստաթղթերում առկա են նաև ուսումնափորձական հողամասում առկա երեք ծիրանենիները կտրող՝ Մեսրոպ Ավագյանի և տնօրենի բացատրությունները, ինչպես նաև մասնագիտական ակտ՝ կազմված՝ 04.11.2013 թվականին՝ ծիրանենիները կտրելու հետևանքով հասցված վնասի չափի մասին:

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ներքին աուդիտն իրականացնում են ներքին աուդիտի ստորաբաժանումը կամ հրավիրված անձիք: Արարատի մարզպետարանի աշխատակազմում ներքին աուդիտի բաժինը ստեղծվել է ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 29-ի թիվ 365 որոշմամբ և կազմակերպում է մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների ներքին աուդիտի աշխատանքները, իսկ կանոնադրության 3.11 կետի համաձայն բաժինն աուդիտի առաջադրանքի իրականացման նպատակով կարող է ներգրավել այլ ստորաբաժանումների մասնագետների:

17.12.2013 թվականի թիվ 210 կարգադրության հիմքում դրված 2-րդ նկատողության հիմքում դրված աուդիտորական հաշվետվությունը կազմված է Արարատի մարզպետի 27.11.2013 թվականի «ՀՀ Արարատի մարզի Հնաբերդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում ներքին աուդիտ իրականացնելու մասին թիվ 187 կարգադրության հիման վրա նույեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 4-ը իրականացրած ուսումնասիրության արդյունքում, բացի այդ հայցվորը մասնակից է եղել ուսումնասիրությանը և ստորագրել հաշվետվության տակ:

Վերոնշյալ կարգադրության մեջ վկայակոչված աշխատանքային օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին կետը միանգամայն համապատասխանում է հայցվորի կողմից վկայակոչված «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 13-րդ կետի ժգ/ ենթակետին, բացի այդ մարզպետի ընդունած բոլոր անհատական իրավական ակտերը ունեն հղում համապատասխան նորմատիվ իրավական ակտին:

Հայցվորը երկու խիստ նկատողությունները ստացել է տարբեր արարքների հիմքով, իսկ աշխատանքից ազատվել երկու կարգապահական տույժերի առկայության հիմքով: Մարզպետի արձակած բոլոր կարգադրությունները ու ընդունած որոշումները պարտադիր տեղադրվում են ներքին աուդիտարանի տեղեկատվական կայք էջում այդ թվում՝ վիճարկվող իրավական ակտերի հայցվորը մասնակից է եղել առաջին և երկրորդ խիստ նկատողություններին նախորդող քննարկումներին, որը հաստատվում է հայցվորի առաջին նկատողությանը նախորդող 04.11.2013 թվականի գրավոր բացատրության և աուդիտորական հաշվետվության տակ նրա ստորագրության նրկայով: Մարզպետի 211 կարգադրության արձակման օրն էլ բանավոր տեղեկացվել է հայցվորին ազատվելու մասին:

Ելնելով վերոգրյալից պատասխանողը գտնում է, որ հայցապահանջը ամբողջությամբ ենթակա է մերժման:









ունենալով, որ հայցվոր կողմը վիճարկում է նաև կիրառված կարգապահական տույժերը, դատարանը հարկ է համարում անդրադառնալ դրանց առանձին առանձին վերջրած:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220 հոդվածի համաձայն՝ «Աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը»: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն՝ «Մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց բացատրության»:

Գործի քննության ընթացքում դատարանին է ներկայացվել Մեսրոպ Ավագյանի կողմից 05.11.2013թ. ստորագրված և Արարատի մարզպետին հասցեագրված գրություն, ըստ որի ինքը երեք ծիրանենիները հատել է դպրոցի տնօրինության թույլտվությամբ: Իսկ ըստ Հնաբերդի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի տնօրենի ՀՀ Արարատի մարզպետին ուղղված գրության, իրեն է դիմել Մեսրոպ Ավագյանը, ով իրականացնում է այդ տարածքի մշակությունը և հայտնել, որ դպրոցի բակի ծիրանի երեք ծառերը ենթակա են հատման, որոնցից մեկը չորացած է, իսկ երկուսը՝ մասնակի չորացած: Հայտնվել է նաև, որ Ս. Ավագյանին ասվել է, որ խնդիրը պետք է ներկայացվի մարզպետարան և համապատասխան մասնագիտական եզրակացությունից հետո որոշում կայացվի: Չնայած դրան Մեսրոպ Ավագյանը առանց տեղյակ պահելու անհասկանալի պատճառներով 31.10.2013թ-ին կտրել էր այդ երեք ծառերը: Գրությունը հասցեագրվել է ՀՀ Արարատի մարզպետին, ստորագրվել է հայցվորի կողմից և վավերացվել դպրոցի կլոր կնիքով, սակայն չի թվագրվել:

04.11.2013թ-ին հանձնաժողովը, մասնակցությամբ ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ Վանիկ Սանոյանի, Հնաբերդի միջնակարգ դպրոցի տնօրեն Անժելա Մեջլումյանի և Հնաբերդ գյուղի բնակիչ Մեսրոպ Ավագյանի կազմել են ակտ, որով որոշել են Հնաբերդի գյուղի նախակրթարանի այգում 3 հատ 20-25 տարեկան ծիրանենու ծառերի ապօրինի կտրելու հետևանքով պատճառված վնասի չափը, որը կազմել է 41 625 դրամ:

Ստեղծված նյութերով 05.11.2013թ ՀՀ Արարատի մարզպետը, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՂ728-Ն հրամանագրի 1.6 կետով կարգադրություն է արձակել, որով խիստ նկատողությամբ պետք է կատարել Հնաբերդի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Մեջլումյանի կողմից հայտարարված միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի կանոնադրության 68-րդ կետի պահանջը խախտելու համար:

Համաձայն Հնաբերդի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի կանոնադրության 68-րդ կետի 17-րդ ենթակետի՝ «Հանրակրթական դպրոցի տնօրենը՝ ապահովում է դպրոցային հատկացումների, հիմնադրի և Հայաստանի Հանրապետության համապատասխան բնակավայրի չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը, ուսումնական նյութական բազայի հաշվառումը, պահպանումը, համալրումը սանիտարահիգիենիկ վիճակի, աշխատանքի



անվտանգության և սահմանված կարգով պարտադիր գործունեության երաշխավորված փաստաթղթերի վարումը և պահպանումը»:

Հինգ ամիս անց, 14.04.2014թ-ին Մեսրոպ Ավագյանը, առանց հասցեագրելու ստորագրել է մեկ այլ գրություն, ըստ որի ինքը երեք հատ ծիրանի չորացած ծառերի կտրման և նորը տնկման պահանջով դիմել է դպրոցի տնօրենին, սակայն առանց պատասխան ստանալու ենթադրել է, որ պատասխանը կլինի դրական կտրել է երեք չորացած ծառերը:

Նման պայմաններում դատարանը գտնում է, որ Հայցվոր կողմի ՀՀ Արարատի մարզի Հնաբերդի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ ձևաթղթի վրա ձևակերպված գրությունը՝ Հասցեագրված ՀՀ Արարատի մարզպետին ըստ էության իրենից ներկայացնում է բացատրություններ ծառերի հատման հանգամանքների վերաբերյալ, հետևաբար այն պետք է դիտել որպես բացատրություններ թույլ տրված խախտման վերաբերյալ: Միաժամանակ դատարանը հարկ է համարում նշել, որ թեև դպրոցի տնօրենը իր գրությամբ նշում է, որ Մեսրոպ Ավագյանը ծառերը կտրել է առանց իրեն տեղյակ պահելու՝ անհասկանալի պատճառներով, այնուամենայնիվ տվյալ պատճառաբանությունը հիմնավոր դիտվել չի կարող այն պարզ պատճառով, որ հայցվորը այդ ժամանակահատվածում եղել է դպրոցի տնօրենը և պարտավոր էր միջոցներ ձեռնարկել դպրոցի աշխատակիցների գործողությունները հսկելու համար: Այսինքն դպրոցի տնօրենի պարագայում ծառերի հատման մասին տեղյակ չլինելը նույնպես կարգապահական խախտում պետք է դիտվի, քանի որ տնօրենը ի պաշտոնե հսկողություն է իրականացնում նաև աշխատակիցների կողմից կարգ ու կանոնի պահպանման նկատմամբ: Նշվածից հետևում է, որ 05.11.2013թ-ի թիվ 167 կարգադրությամբ կիրառված կարգապահական տույժը բխում է օրենքի պահանջներից և այդ մասով նույնպես պահպանված են կարգապահական պատասխանատվության ենթարկելու սահմանված ընթացակարգը:

Ինչ վերաբերում է 17.12.2013թ. թիվ 210 կարգադրությանը, որով հայցվորին հայտարարվել էր խիստ նկատողություն մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի աուդիտորական հաշվետվությամբ արձանագրված խախտումների համար, ապա գործով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ աուդիտորական հաշվետվությունը թվագրված է 05.12.2013թ-ով, որը ստորագրված է հանձնաժողովի անդամներ Ս. Սարգսյանի, Հ. Պողոսյանի, Ս. Մանուկյանի և հայցվոր Ա. Մեջլումյանի կողմից: Ստորագրելուց հետո կատարվել է նաև մակագրություն հետևյալ բովանդակությամբ. Հանձնեցի. 24.12.2013թ. և Ս. Քարամյանի դիմաց կատարվել է ստորագրության: Դրանից ներքև մակագրված է. Ունեն առարկություններ, որի համար ստորագրում են և կատարված է հայցվոր՝ Մեջլումյանի ստորագրությունը: Հատկանշական է, որ այդուհանդերձ Մեջլումյանի կողմից առարկություններ այդպես էլ չի ներկայացվել: Ամեն դեպքում հայցվորը չի ներկայացվել որևէ փաստաթուղթ, որով Ա. Մեջլումյանը առանց հարկադրված խախտումների: Գործով ներկայացվել է նաև 10.12.2013թ-ի արձանագրված արձանագրություն, ըստ որի Հնաբերդի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ում կատարված ներքին աուդիտի հաշվետվությունը ներկայացվել է ծանոթացվել է դպրոցի տնօրեն Ա. Մեջլումյանին, սակայն չի ստորագրվել առանց բացատրությունների: Տվյալ արձանագրությամբ հիմնավորվում է, որ 10.12.2013թ-ի դրությամբ Ա. Մեջլումյանը ծանոթացվել է աուդիտորական ստուգման արդյունքում կազմված աուդիտորական հաշվետվությամբ արձանագրված խախտումներին և ամենաքիչը 7 օր՝ մինչև



17.12.2013թ-ը ժամանակ է ունեցել բացատրություններ ներկայացնելու թույլ տրված խախտումների վերաբերյալ, սակայն որևէ բացատրություն չի ներկայացվել:

Նման պայմաններում դատարանը գտնում է, որ Հայցվոր կողմի համար ապահովվել է աուդիտորական հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերաբերյալ բացատրություններ ներկայացնելու ողջամիտ ժամկետ, հետևաբար այդ առումով չի խախտվել կարգապահական պատասխանատվության ենթարկելու սահմանված ընթացակարգը:

Ինչ վերաբերում է ՀՀ Արարատի մարզպետի երրորդ՝ 18.12.2013թ. թիվ 211 կարգադրությանը Ա. Մաջլունյանին աշխատանքից ազատելու վերաբերյալ, ապա ՀՀ աշխատանքային օրենսգրքի 121-րդ հոդվածի համաձայն՝ Գործատուն իրավունք ունի սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը, եթե աշխատանքային կարգապահական խախտում թույլ տված աշխատողն ունի առնվազն երկու չհանված կամ չմարված կարգապահական տույժ, որպիսին հայցվոր կողմը ունեցել է տվյալ պահի դրությամբ:

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 123-րդ հոդվածի՝ «Սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերով նախատեսված դեպքերում գործատուն իրավունք ունի աշխատանքային պայմանագիրը լուծելու՝ առանց աշխատողին ծանուցելու»:

Դատարանը նաև հարկ է համարում նշել, որ ըստ էության մարզպետարանը հանդիսանում է լիազորված պետական մարմինը և համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի ՀՀ Արարատի մարզի Հնաբերդի միջնակարգի դպրոց ՊՈԱԿ-ի կառավարման մասով օժտված է հետևյալ լիազորություններով.

1. Լիազորված պետական մարմինն իրականացնում է պետական կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը եւ պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ անպատշաճ իրականացման համար:

2. Լիազորված պետական մարմինը՝

ա) պետական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձեւավորումը եւ նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ) իրականացնում է պետական կազմակերպության գործունեության վերահսկողությունը.

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում պետական կազմակերպության գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող որոշումները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

դ) լսում է պետական կազմակերպության հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերաբերյալ տեղեկությունները.

ե) վերահսկողություն է իրականացնում պետական կազմակերպության ամրացված պետական սեփականության օգտագործման վերաբերյալ տեղեկությունների ցուցման մասին:

զ) վերահսկողություն է իրականացնում պետական կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում



համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) հաստատում է պետական կազմակերպության տարեկան հաշվետվությունները եւ տարեկան հաշվեկշիռը, եթե պետական կազմակերպությունը չունի կոլեգիալ կառավարման մարմին.

ը) իրականացնում է սույն օրենքով, հիմնադրի որոշումներով եւ պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

Տվյալ դեպքում ՀՀ Արարատի մարզպետի կողմից Հնաբերդի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ում ներքին աուդիտի միջոցով կազմակերպված ստուգումը և ստուգման արդյունքներով կայացված որոշումը ամբողջությամբ բխում է վերը նշված նորմի պահանջներից:

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի՝ «Պետական կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը, որին նշանակում եւ ազատում է (նրա լիազորությունները դադարում են) լիազորված պետական մարմինը, եթե հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

Պետական կազմակերպության գործադիր մարմինը օրենքով, հիմնադրի եւ լիազորված պետական մարմնի որոշումներով, պետական կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է պետական կազմակերպության գործունեությունը եւ կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, պետական կազմակերպության կանոնադրության եւ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար»:

Ինչ վերաբերում է հայցվոր կողմի առարկություններին և փաստարկներին, ապա դատարանը գտնում է հետևյալը: Սույն իրավահարաբերությունների նկատմամբ «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքը կիրառելի չէ, հետևաբար այդ օրենքի հիմքով հայցվոր կողմի առարկությունները նույնպես անհիմն են: Տվյալ իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի են «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի նորմերը: Հայցվոր կողմի մյուս փաստարկը, որ Ա. Մեջլումյանի գրությունը ուղղված ՀՀ Արարատի մարզպետին թվագրված չէ, հետևաբար չի կարող համարվել թույլատրելի ապացույց, ապա այն դատարանը անհիմն է համարում, քանի որ տվյալ գրությունը ձևակերպվել է ՀՀ Արարատի մարզի Հնաբերդի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի ձևաթղթի վրա, ստորագրվել է դպրոցի տնօրենի կողմից և վավերացվել կլոր կնիքով, թվագրման բացակայությունը հայցվոր կողմի բացթողումն է, հետևաբար այն չի կարող դրվել իր իսկ առարկությունների հիմքում: Բացի այդ, տվյալ փաստաթուղթը ամբողջությամբ վերաբերում է հատված ծիրանեին, որի հետևանքով չի հարուցում, որ խոսքը վերաբերում է հատկապես այն երեք ծիրանեին, որոնք ներկայումս կտրվել են Հնաբերդի միջնակարգ դպրոցի բակից՝ Ս. Միաբանյանի կողմից: Միաժամանակ դատարանը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թ. 12-ի 24-րդ հունիսի ԵԱԲԴ /1066/02/11 քաղաքացիական գործով նախադեպային որոշումը, որով հաստատվել է կիրառելի չէ հետևյալ պատճառաբանությամբ: ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թ. 12-ի 24-րդ հունիսի ԵԱԲԴ /1066/02/11 քաղաքացիական գործով ըստ հայցի էղզարկող դրոշմային ընդդեմ «Ազադ Ֆայն Քեմիքլս» ՍՊԸ-ի հրամանն անվավեր ճանաչելու, նախկին



աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը և գումար բռնագանձելու պահանջների մասին, անդրադառնալով մինչև կարգապահական տույժի կիրառումը աշխատողից բացատրություն պահանջելու իրավական հիմնախնդրին ըստ էության գտել է, որ բացատրություններ պահանջելը պարտադիր է և այն դեպքերում, երբ այն չի պահանջվել՝ դրա համար ողջամիտ ժամկետ սահմանելով, կիրառված կարգապահական տույժը չի կարող իրավաչափ լինել: Սույն գործով Ա. Մեջլումյանը ՀՀ Արարատի մարզի Հնաբերդի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի ձևաթղթի վրա ըստ էության բացատրություններ է ներկայացրել ծառերի հատման հանգամանքների վերաբերյալ, և այն Արարատի մարզպետի կողմից հիմնավոր չի համարվել, իսկ երկրորդ դեպքում ըստ էության խախտումները արձանագրվել են աուդիտորական ստուգումների արդյունքում կազմված հաշվետվությամբ, մինչդեռ արձանագրված տարաբնույթ խախտումների վերաբերյալ հայցվոր կողմը որևէ բացատրություն չի ներկայացրել, թեև դրա համար ունեցել է բավարար ժամանակ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ «Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բախշվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն»:

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով, դատարանը

## Վ Ն Ո Ւ Ե Ց

Քաղաքացիական գործն ըստ հայցի Անժելա Մեջլումյանի ընդդեմ ՀՀ Արարատի մարզպետի, «ՀՀ Արարատի մարզի Հնաբերդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի՝ 05.11.2013 թվականի թիվ 167, 17.12.2013 թվականի թիվ 210, 18.12.2013 թվականի թիվ 211 կարգադրություններն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը գանձելու պահանջների մասին՝ մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:

ԴԱՏԱՎՈՐ՝



Հ.ԵՆՈՔՅԱՆ